

”Մեզո-Գոլդ” ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի կառուցվելիք նոր պոչամբարի 2014 թ. փետրվար ամսի հասարակական լուսմների մասին

<http://www.mnp.am/?aid=2443> .

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 8 հոդվածով սահմանված կարգով 2014 թվականի փետրվարի 10-ին ժամը 11.00-ին ք. Երևան, Սունդուկյան 23/100 հասցեում տեղի կունենան <<Մեզո Գոլդ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքավայրի պոչամբարի նախագծի լրամշակված բնապահպանական մասի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լուսմներ:

<http://www.mnp.am/?aid=2481#sthash.oUPkf2zR.dpu>

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 10 հոդվածով սահմանված կարգով ս.թ. փետրվարի 12-ին ժամը 12.00-ին Երևան քաղաքի Սունդուկյան 23/100 հասցեում տեղի կունենան <<Մեզո Գոլդ>> ՍՊԸ-ի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի նոր պոչամբարի **նախագծի լրամշակված բնապահպանական մասի** վերաբերյալ մասնագիտական եզրակացության, հասարակական և ազդակիր համայնքի ղեկավարի կարծիքների հասարակական լուսմներ:

Այս տեքստերը ՀՀ Բնապահպանության նախարարության /ԲՆ/ հայտարարություններն են. մեկ օրվա տարբերությամբ երկու հասարակական լուսմ միևնույն նախագծի համար: Մեզ հասկանալի է ”Մեզո-Գոլդ” -ի ստեղծագործ ուղեղ կիրառելու ձգտումը՝ սա արված է լուսմների պատրանք ստեղծելու, մարդկանց ժամանակ չտալու ներկայացվածի մեջ խորանալու, առավել ևս՝ մեկ օրվա ընթացքում գրավոր կարծիք հայտնելու հնարավորությունից զրկելու մղումով: Սակայն ավելի մեծ հիասթափություն է առաջացնում ԲՆ -ն դիրքորոշումը, արդյոք լիազոր մարմինը ևս շահագրգռված էր լուսմներին ձևական տեսք տալու, այդ երբ՝ է պատահել որ երկու լուսմներ լինեն մեկ օրվա տարբերությամբ: Եզրկացություն անելուն օգնում է այն հանգամանքը, որ ”Մեզո-Գոլդ” ՍՊԸ-ի տնօրեն Ա. Պողոսյանը շրջանցելով Համայնքի լուսմները, միանգամից փետրվարի 10 հանդիպումը ներկայացրեց որպես 4-րդ լուսմ՝ սկիզբ համարելով տապալված և բացասական եզրակացություն ստացած 2012-2013թթ լուսմերը:

Հիշենք, որ 04.2013 թ ԲՆ-ը. թիվ ԲՓ 36 որոշմամբ 3-րդ պոչամբարի նախագծին տվել էր բացասական փորձագիտական եզրակացություն: Տրամնաբանական է, որ , նոր դիմում, նախագիծ ներկայացնելիս Մեզո-Գոլդը եթե չի ուզում կրկին մերժվել, նոր նախագծում առնվազն պետք է բացառեր նախկին բացասական եզրակացության համար հիմք հանդիսացած փորձագիտական հիմնավորումները, մասնավորապես, մեջբերում ենք. <<Թուխմանուկի հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ԲՆ-ն կողմից Ընկերությանը 26.04.2013թ տրվել է ԲՓ 36 բացասական եզրակացությունը՝ հետևյալ փորձաքննական հիմնավորմամբ.

-Ելնելով փոխկապակցվածությունից, նոր պոչամբարի հետ անհրաժեշտ էր փորձաքննության ներկայացնել նաև ոսկու բացահանքի շահագործման, ինչպես նաև հարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցման նախագծերը

-Բացակայում են ՀՀ կառավարության 11.11.1998թ. “ՀՀ արդյունաբերական օբյեկտի կանոնադրությունը հաստատելու մասին” թիվ 702 որոշմամբ նախատեսված գործող պոչամբարի անվտանգության վկայագրերը;

-պոչամբարի տարածքում առկա են սողանքային մարմիններ՝ համաձայն Ճապոնական միջազգային գործակալության կատարած ուսումնասիրությունների>>
որտեղ պոչամբարի կառուցումը ռիսկային է:

Բերված փորձագիտական հիմնավորումներից որևէ մեկը չի կատարվել:

Մեկ անգամ չէ, որ Փորձագիտական եզրակացություններում որպես փորձագիտական հիմնավորում բերվում են նախագիծը միասնական ներկայացնելու պահանջ՝ հանքի շահագործում, հարստացուցիչ ֆաբրիկա, պոչամբար՝ Ելնելով տրամաբանական կապից, քանի որ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը պետք է գնահատվի որպես մեկ ամբողջական պրոցեսի տարբեր իրար հաջորդող էտապների համար: Այս պահանջը առկա է հանքի շահագործման 04.06.2006 թ. բացասական եզրակացության նաև 07.07 2006 թիվ ՓԲ 71 դրական պայմանով տրված եզրակացության մեջ, որի շուրջ կայքում ունենք մանրամասն վերլուծություն:

Ինչո՞ւմ է Ընկերության համառությունը սկսել վերջից՝ պոչամբարից: Կարծում ենք թեկուզև այն, որ մեր հարցին, թե քանի՞ այդպիսի պոչամբար է նախատեսվում կառուցել համայնքային հողերի վրա, ”Մեզո-Գոլդ” տնօրեն Ա. Պողոսյանը պատասխանել է, որ չի կարող ասել, այսինքն հայտնի չէ: Տնօրենի հայտարարության համաձայն իրենք ունեն 18 մլն տ հանքաքարի հաստատված պաշար, իսկ այս վերջին պոչամբարի համար գյուղապետի և համայնքի ավագանու 4 անդամների 26 հունիսի 2013 թ. ստորագրված փաստաթղթով, հատկացրել են նոր տարածք 3-րդ պոչամբար կառուցելու համար, թե ինչու՞ չի նշված տարածքի չափսը, պետք է հարցնել գյուղապետ Հ. Մկրտչյանին: Նախագծում պոչամբարի համար նախատեսված տարածքը 6-7 հա է: Այսինքն հայտնի չէ, թե համայնքի գյուղատնտեսական հողերից էլի ինչքանն է ոչնչանալու պոչամբարի տակ: Որքան էլ տխուր ու անբնական լինի, փաստորեն գյուղապետ Հ. Մկրտչյանը որոշումներ է կայացնում համայնքի թիկունքում, որը չի բխում համայնքի շահերից: Ո՞ւմ շահն է պաշտպանում Գյուղապետը:

Նախագծերը առանձին-առանձին և հակառակ հերթականությամբ ներկայացնելու ևս մի հաջողված փորձ ունի ”Մեզո-Գոլդ”:

Ընկերությունը Թուխմանուկ հանքավայրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցման աշխատանքային նախագծի վերաբերյալ 05.11.2007թ ստացել է թիվ ԲՓ 126 դրական եզրակացությունը, որտեղ որպես հանքահարստացման տեխնոլոգիա նկարագրված է նաև ֆլոտացիոն եղանակը և բերված է օգտագործվող **քիմիական ռեագենտների ցանկը**, մինչդեռ, ընդամենը ամիսներ առաջ, 20.02.2007թ-ին “Մեզո Գոլդ “ ՍՊԸ-ին ՀՀ ԲՆ կողմից տրված երկրորդ պոչամբարի կառուցման նախագծի ԲՓ-15 դրական եզրակացության փաստաթղթում նշված է, որ Ընկերությունը հանքահարստացման տեխնոլոգիական պրոսեցում քիմիկատների կամ ռեագենտների օգտագործում չի նախատեսում և առաջացած պոչանքները հեղուկ ֆազայում վնասակար աղտոտող նյութեր չեն պարունակում, **ինչը չի համապատասխանում իրականությանը:**

Այսինքն նախ պոչամբարը, ապա ֆաբրիկան ներկայացնելու հաճույքը նաև պոչամբարի վնասակարությունը թաքցնելն է, հակառակ դեպքում հանքը նկարագրելիս պետք է ներկայացվեր հանքաքարի բաղադրությունը, այդ թվում հիմնական կորզվող օգտակար հանածոյից բացի նաև հարակից ծանր մետաղները և թունավոր տարրերը:

Ի դեպ 10.02.2014թ.-ի լուումները, որը ինչպես արդեն պարզ էր, որ չի կարող 4-րդ լուում լինել, այլ ընդամենը առաջին է՝ համայնքի համար, համայնքի համաձայնությունը ստանալու նպատակով, կազմակերպվել է նախագծողի գրասենյակում՝ Երևանում իսկ համայնքը տեղյակ էլ չէր: Մեկ ժամ ուշացումով երեք Մեխքոյուղցու հետ ներկայացավ համայնքապետը, հավանաբար, իրադրությունը փրկելու համար հավանաբար հայտնեցին գյուղապետին, որ գալ է հարկավոր: Մակայն նա խուսափեց թե իր, և թե համայնքի կարծիքը հայտնել: Ըստ մեզ հասած լուրերի Համայնքը խիստ զայրացած է, արդյունքների մասին կիմանանք 12.02.2014թ լուումների ընթացքում, որը կարծում եմ դրամատիկ է լինելու:

Էլ ինչ է սպասվում Մեխքոյուղին, երբ ներկայումս առկա երկու պոչամբարները դեռ չեն ենթարկվել ռեկուլտիվացիայի կամ կոնսերվացման: